ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

«Աջակցություն սոցիալական ոլորտի բարեփոխումներին» ծրագրի նպատակն է բարելավված և կայուն սոցիալական պաշտպանվածության համակարգի խթանումը Հայաստանում, որը կարձագանքի քաղաքացիների կարիքներին: Ծրագիրը կաշխատի անհատ քաղաքացիների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ բարելավելու համար տեղեկատվության հասանելիությունը վերջիններիս համար, ընդլայնելու նրանց մասնակցությունը քաղաքականության բարեփոխման գործընթացին, և ամրապնդելու նրանց կարողությունները՝ կառավարության գործունեության մշտադիտարկման համար:

ԴՐԱՄԱՇՆՈՐՀ՝ Պայմանագիր թիվ AID -111-A-15-00003

Պաշ տո ն ի անվանումը՝ Ֆինանսի ս տ ,

Վերոնշյալը լրիվ դրույքով պաշտոն է, աշխատավայրը՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ Կենտրոնական գրասենյակ: Խորհրդատուն վարձվելու է մեկ տարի ժամկետով՝ հետագա հնարավոր երկարաձգմամբ՝ կախված պարտականությունների կատարման արդյունքներից:

Պահ ան ջ վ ո ղ հ մտություններ

1. Բարձրագույն կրթություն, համապատասխան աշխատանքային փորձ:
2. Համակարգչային հմտություններ:
3. Թվաբնական և հանրահաշվական գործողությունների արագ և ճշգրիտ կատարելու հմտություններ:
4. Ֆինանսական և բյուջետային գործի, հաշվապահական հաշվառման հիմնական սկզբունքների, կիրառվող մեթոդների իմացություն:
5. Ֆինանսների ոլորտում ժամանակակից մեթոդների հետազոտության ունակություն:
6. Ֆինանսական ինֆորմացիան ժամանակին և ճշգրիտ վերլուծելու, հաշվետվություն կազմելու ունակություններ:
7. Ինտենսիվ պայմաններում աշխատելու ունակություններ:
8. Աշխատակիցների, ինչպես նաև հաճախորդների հետ համագործակցելու հմտություններ:
9. Ֆինանսական փաստաթղթերի հստակ և պարզ ձևակերպման ունակություն՝ ներառյալ տվյալ լեզվին հատուկ քերականական կառույցների ճիշտ կիրառումը:
10. Կազմակերպչական և միջանձնային հարաբերությունների ունակություններ:
11. Հայերենի, անգլերենի գրավոր և բանավոր լավ իմացություն:
12. Հաշվետվություններ կազմելու կարողություն եւ համակարգչային հմտություններ (WORD Exsel):

Պարտականություններ

1. Օգնել ղեկավարին՝ հսկելու ծրագրի ֆինանսական և բյուջետային կատարումները:
2. Կազմակերպության դոնորի պահանջներին համապատասխան՝ ֆինանսական փաստաթղթեր և հաշվետվություններ ներկայացնել:
3. Մասնակցել հաշվապահական, գնումների և մատակարարման, պահեստի և այլ բաժինների ֆինանսների հետ առնչվող գործունեությունը:
4. Կատարել ֆինանսական վերլուծություններ՝ կապված կազմակերպության բաժինների և տարածաշրջանային ստորաբաժանումների գործունեության հետ:
5. Մասնակցել հաշվապահությունում ծախսերի վերլուծության գործընթացին:
6. Նախատեսել հեռանկարային պլաններ, ներդնել և զարգացնել ժամանակակից ընթացակարգեր, համապատասխան փոփոխություններ կատարել գործող ֆինանսական մեթոդների մեջ:
7. Հանդիպել բաժինների պատասխանատուների հետ ստրատեգիական պլանավորման գործընթացի կոորդինացման և ֆին.միջոցների բաշխման առաջնահերթությունը որոշելու նպատակով:
8. Պատրաստել և վերլուծել ամենամսյա ֆինանսական ընդհանուր, վիճակագրական հաշվետվություններ և այլ տեխնիկական նախաձեռնություններ:
9. Օգնել ղեկավարին առաջարկի և ստրատեգիական պլանավորման պատրաստման ընթացքում:
10. Ինտեգրացված ձևով պահպանել գրանտի ինֆորմացիան:
11. Ձգտել բարձրացնել կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ աշխատանքի ժամանակին և արդյունավետ իրագործման միջոցով:
12. Անհրաժեշտության դեպքում իրականացնել այլ գործողություններ, աշխատելով նաև ոչ աշխատանքային օրերին:
32. Գործողում մարզեր (հավանական է):

Հետաքրքրվածության հայտերը (ինքնակենսագրական, ռեզյումե) պետք է ներկայացվեն գրավոր՝ էլեկտրոնային փոստով մինչև 2015 թվի հունվարի 25-ը, ժամը 18:00-ն՝ ստորև ներկայացված էլ. հասցեով.

Hr.Legal@ngo.mission.am

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության
Կադրերի բաժնի ղեկավար Ալլա Հարությունյանին